ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

12.08.2026

Սիրելի՛ երիտասարդներ

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ:
ՄԱԿ-ի կողմից սահմանված այս տարվա՝ «Տարբեր միջավայրեր, ընդհանուր ձգտումներ» կարգախոսը դիպուկ է բնորոշում երիտասարդության աշխարհը: Դուք ապրում եք տարբեր պայմաններում, ունեք տարբեր ճանապարհներ, հետաքրքրություններ ու փորձառություններ, սակայն բոլորիդ միավորում է կրթվելու, զարգանալու, ստեղծելու, սեփական հնարավորություններն ընդլայնելու և ավելի լավ ապագա ձևավորելու ձգտումը:
Երիտասարդության մասին հաճախ խոսում են որպես երկրի ապագայի: Բայց ես համոզված եմ, որ դուք, առաջին հերթին, մեր ներկայի ակտիվ և անփոխարինելի դերակատարներն եք՝ ձեր գաղափարներով, աշխատանքով և նախաձեռնություններով:
Այսօր մեր պետության և հասարակության առաջ ծառացած խնդիրների լուծման համար անհրաժեշտ են նոր մտածողություն, հիմնարար գիտելիքներ, տեխնոլոգիական հմտություններ և ստեղծարար մոտեցումներ: Հենց այդ հատկանիշներն են երիտասարդներին հնարավորություն տալիս լիարժեքորեն դրսևորելու իրենց ներուժը և ստանձնելու կարևոր դեր ու պատասխանատվություն մեր երկրի կյանքում:
Սյունիքի երիտասարդներն աչքի են ընկնում ակտիվությամբ և պատրաստակամությամբ՝ մասնակցելու իրենց համայնքների և մարզի կյանքին: Նկատելի է ձեր ներգրավվածությունը մարզի հասարակական կյանքում և զարգացման տարբեր գործընթացներում: Սա մեզ համար կարևոր է, որովհետև ձեր ձայնը պետք է լսելի լինի ոչ միայն երիտասարդական միջոցառումներում, այլև համայնքային, հասարակական և պետական կյանքի այն գործընթացներում, որոնք անմիջականորեն ձևավորում են ձեր և մեր երկրի ապագան:
Այս տարվա համար առանձնահատուկ խորհուրդ ունի նաև Կապանի՝ ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաքի կարգավիճակը: Այն հնարավորություն է տալիս Սյունիքի երիտասարդներին ներկայանալու ավելի լայն հարթակներում, ստեղծելու նոր կապեր, փոխանակելու փորձը, հանդես գալու նոր նախաձեռնություններով և ներգրավվելու միջազգային համագործակցության մեջ:
Սիրելի՛ երիտասարդներ
Ձեր մասնակցությունը մեր երկրի կյանքին պետք է արտահայտվի ոչ միայն պատրաստի ծրագրերի մեջ ներգրավվելով, այլև սեփական գաղափարներ առաջարկելով, նախաձեռնություններ առաջ բերելով և այն միջավայրի ձևավորմանը մասնակցելով, որտեղ ցանկանում եք ապրել, սովորել ու աշխատել:
Դրա համար կրթությունը սկզբունքային նշանակություն ունի: Այսօրվա արագ փոփոխվող աշխարհում կրթությունը չի սահմանափակվում միայն ուսումնական գործընթացով: Այն շարունակական զարգացում է՝ նոր գիտելիք ու հմտություններ ձեռք բերելու, տեխնոլոգիական և քննադատական մտածողությունը զարգացնելու, փոփոխություններին ինքնուրույն ու պատասխանատու արձագանքելու կարողություն:
Մաղթում եմ, որ ձեր յուրաքանչյուր նախաձեռնություն գտնի իր ճանապարհը դեպի իրականություն, գիտելիքը վերածվի կարողության, իսկ կարողությունը՝ արժեք ստեղծելու

հնարավորության: Ցանկանում եմ բոլորիդ համարձակություն՝ մեծ նպատակներ դնելու, հետևողականություն՝ դրանց հասնելու և վստահություն՝ սեփական ուժերի նկատմամբ: Թո՛ղ ձեր հաջողությունները լինեն ոչ միայն յուրաքանչյուրիդ անձնական ձեռքբերումները, այլև իրական ներդրում ձեր համայնքի, Սյունիքի և Հայաստանի զարգացման գործում: Կրկին շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում խաղաղություն, նոր հնարավորություններ, մասնագիտական կայացում ու արժանապատիվ ճանապարհ: